ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք!

# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Օրգան ՀԿ(բ)Կ Կենտկոմի, Յերկոմի յեվ ՀԽՍՀ Կենտգործկոմի

„Хорурдаин Айастан"

Орган ЦК и ЕК КП(б)А и ЦИК ССРА

17-ՐԴ ՏԱՐԻ

1937 Թ.

№ 72 (4972)

ՑԵՐԿՈՒՇԱԲԹԻ

29 ՄԱՐՏԻ

... ՏԵԽՆԻԿԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ՀԻՆ ԼՈԶՈՒՆԳԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ԱՅԺՄ ԼՐԱՑՆԵԼ ՆՈՐ ԼՈԶՈՒՆԳՈՎ՝ ԲՈԼՇԵՎԻԶՄԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ, ԿԱԴՐԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԼՈԶՈՒՆԳՈՎ.

ՍՏԱԼԻՆ

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՏՐՈՑԿԻՍՏԱԿԱՆ ՈՒ ԱՅԼ ՅԵՐԿԵՐԵՍԱՆԻՆԵՐԻՆ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՅԻ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

# ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ, 1937 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 3-ԻՆ



Ընկերնե՛ր.

Պլենումում լսված զեկուցումներից և դրանց շուրջը ծավալված մտքերի փոխանակությունից յերևում ե, վոր մենք այստեղ գործ ունենք հետևյալ յերեք հիմնական փաստերի հետ:

Առաջին՝ ոտարերկրյա պետությունների գործակալների վնասարարական և դիվերսիոն-լրտեսական աշխատանքը, վորոնց թվում բավականաչափ ակտիվ դեր եյին խաղում տրոցկիստները, այս կամ այն չափով շոշափեց մեր բոլոր կամ համարյա բոլոր կազմակերպությունները, ինչպես տնտեսական, այնպես և վարչական ու կուսակցական:

Յերկրորդ՝ ոտարերկրյա պետությունների գործակալները, այդ թվում տրոցկիստները, սողոսկել եյին վոչ միայն ստորին կազմակերպությունների մեջ, այլև վորոշ պատասխանատու պոստերի:

Յերրորդ՝ մեր մի քանի ղեկավար ընկերներ, ինչպես կենտրոնում, այնպես և տեղերում, վոչ միայն չկարողացան տեսնել այդ վնասարարների, դիվերսանտների, լրտեսների ու մարդասպանների իսկական դեմքը, այլև այն աստիճան անհոգ, բարեհոգի ու միամիտ դուրս յեկան, վոր վոչ սակավ դեպքերում իրենք ոժանդակեցին ոտարերկրյա պետությունների գործակալների անցնելուն՝ այս կամ այն պատասխանատու պոստերը:

Սրանք են այն յերեք անվիճելի փաստերը, վորոնք բնականաբար բղխում են զեկուցումներից և նրանց շուրջը ծավալված մտքերի փոխանակությունից:

I

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՀՈԳՈՒԹՅՈՒՆ

Ինչո՞վ բացատրել, վոր մեր ղեկավար ընկերները,

Տրոցկիստական-զինովյեվական բլոկի լրտեսա-